Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 30-ի
N 2-04/19/7 որոշմամբ:

Փոփոխությունը կատարվել է 2025թ.-ի փետրվարի 26-ի
N1-02/25/1 որոշմամբ:
Գիտական խորհրդի նախագահ՝
Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ղեկավարությունը, աշխատակիցները և ուսանողական կազմը գիտակցում են, որ որակի ապահովման (ՈԱ) համակարգի մշակումը, ներդրումը և մշտական կատարելագործումը բուհի առաջնահերթ խնդիրներից է: Հավատարիմ մնալով որակի ամբողջական կառավարման (TQM) սկզբունքին, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Հավատարմագրման պետական չափանիշներով և չափորոշիչներով, ինչպես նաև Որակի ապահովման Եվրոպական ուղենիշներով ու չափորոշիչներով (ESG)՝ Համալսարանը մշակել է ՈԱ սույն քաղաքականությունը, որպես բուհի որակի ապահովման գործընթացներն ուղղորդող հիմնարար մոտեցումների և կանոնների ամբողջություն՝ ուղղված Համալսարանի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների որակի և արդյունավետության աճին(**Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1**):

Այն կոչված է ապահովելու Համալսարանի մրցունակությանը և կայունությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և նորարարական գործունեության արդիականությունը, ֆինանսական ցուցանիշների աճը, հետևաբար բուհի աշխատակիցների և շահակից կողմերի բավարարվածությունը:

Համալսարանի ղեկավարությունը պետք է ապահովի, որ բոլոր շահակիցները ծանոթ լինեն և ընդունեն սույն քաղաքականությանը, ինչպես նաև մասնակցեն նրա արդյունավետ իրականացմանը: Քաղաքականությունը պետք է իրականացվի կառավարման բոլոր աստիճաններում և ենթարկվի վերլուծության, անհրաժեշտության դեպքում՝ վերանայման, իսկ Համալսարանի յուրաքանչյուր աշխատակից իր իրավասությունների սահմաններում կրում է անձնական պատասխանատվություն իր աշխատանքի որակի համար:

2. ՈՐԱԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Կրթության ոլորտում «որակի» հասկացության համար ընդունված տարբեր մոտեցումներից Համալսարանն առաջնորդվում է **«համապատասխանություն նպատակին»** սկզբունքով, այսինքն՝ Համալսարանն, նրա կառույցներն ու գործընթացները որակյալ են, եթե համապատասխանում են այն նպատակին, որի համար նախատեսված են: Մյուս կողմից, բուն նպատակներն ինքնին պետք է լինեն հիմնավորված, համարժեք և տեղին:

Սկզբունքի կիրառման հիմքում ընկած է Համալսարանի կամ նրա կրթական ծրագրերի նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը և շահակիցների բավարարվածությունը ձեռքբերումներից:

Որակի այսպիսի սահմանման հիմնական ուղղորդիչներն են Համալսարանի առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև գործունեության տարբեր ոլորտների համար համալսարանի հրապարակած հավակնությունները:

3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Համալսարանի որակի ապահովման քաղաքականության հիմքում դրված են հետևյալ հիմնարար սկզբունքները:

1.**Համակարգային մոտեցում**. Համալսարանի գործունեության բոլոր ոլորտները՝ ուսումնական, հետազոտական և հասարակությանը ծառայությունների մատուցման, ենթակա են գնահատման և հաշվետվողականության:

2.**Կենտրոնացված կանոնակարգում**. ՈԱ գործընթացների համար գործում են միասնական կանոնակարգային և ընթացակարգային հենք ու գնահատման չափանիշներ, որոնց հետևում են ուսումնական բոլոր ստորաբաժանումները: Այստեղ հիմնական համակարգող դերը վերապահված է Գիտական խորհրդին (ԳԽ), որն իրականացնում է համապատասխան աշխատանքների պլանավորումը, կանոնակարգային /չափորոշիչ փաստաթղթերի և ընթացակարգերի հաստատումը, ՈԱ նախատեսված գործընթացների վերահսկողությունը և արդյունքների քննարկումը: Այս խնդիրների իրականացման համար Համալսարանն ստեղծել է ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողով և ՈԱ վարչական կառույց՝ ՈԱ կենտրոն:

3.**Գործընթացների ապակենտրոնացված իրականացում**. Առանձին առարկայական ոլորտներում կրթական չափորոշիչների և ծրագրերի ՈԱ գործընթացների համար պատասխանատու են ֆակուլտետներն ու ամբիոնները: ՈԱ ապակենտրոնացված գործընթացների համապատասխանությունը Համալսարանի միասնական չափանիշներին ապահովվում է կանոնակարգային և ընթացակարգային միասնական հենքի, ՈԱ կենտրոնի ու ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի միջոցով:

4.**Ինքնագնահատում**. Համալսարանի գործունեությունը գնահատվում է ըստ իր նպատակների, թե որքանով են իրականացվել սահմանված նպատակները: ՈԱ ընդունված մոդելը ենթադրում է պլանավորման և գնահատման համակարգի առկայություն: Նպատակները պետք է պլանավորվեն, իսկ գործողությունները՝ լինեն չափելի: Սահմանված նպատակները պետք է լինեն կոնկրետ, չափելի, իրագործելի, իրատեսական և ժամանակագրված (SMART):

5.**Բարելավում. Համալսարանի** ՈԱ համակարգը միտված է Համալսարանում որակի շարունակական բարելավման գործընթացներին նպաստելուն: Ինքնագնահատումը դիտարկվում է որպես կարևոր գործիք՝ Համալսարանում կրթության որակը բարձրացնելու համար: Ուսանողների, շրջանավարտների և գործատուների հարցումները դիտվում են որպես որակի շարունակական բարելավման կարևոր մեխանիզմներ:

6.**Հենանշումների և վկայությունների վրա հիմնված մոտեցում**. Համալսարանն գնահատում է իր ձեռքբերումները համապատասխան ազգային և միջազգային հենանիշների նկատմամբ: Համալսարանի ՈԱ մեթոդները հիմնված են ապացույցների /վկայությունների վրա, որտեղ վերջնարդյունքներն ու շահեկիցների (այդ թվում՝ ուսանողների, դասախոսների, գործատուների և լայն հանրության) հետադարձ կապով ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում վերլուծությունների և եզրակացությունների համար և դրանց հիման վրա պլանավորվում են բարելավող միջոցառումները:

7.**Անձնակազմի ընդլայնված մասնակցություն**. Համալսարանն խրախուսում է դասախոսական և վարչական կազմերի ընդլայնված մասնակցությունը ՈԱ և բարելավման գործընթացներում, խթանում անհատական նախաձեռնությունները ուսումնական (ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն) և վարչական ստորաբաժանումների ՈԱ գործընթացներում:

8.**Ուսանողների և արտաքին գնահատողների ներգրավում**. Ուսանողների, շրջանավարտների և գործատուների լիարժեք մասնակցությունը ՈԱ գործընթացներում համակարգի արդյունավետության հիմնական երաշխիքներից է: Նախատեսված է տարբեր ոլորտներում նրանց մասնակցության հետևյալ ձևերը՝

- դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ,
- Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ,
- շրջանավարտներից գործատուների բավարարվածության հարցումներ,

- ինքնագնահատման բուհական, ֆակուլտետային և կրթական ծրագրային գործընթացներ:

9. Փոխկապվածություն ՈԱ ներքին և արտաքին գործընթացների միջև: Որակի ներքին ապահովումը արտաքին գնահատման հիմքն է և կառուցվում է վերջինիս չափանիշների և ընթացակարգերի հաշվառմամբ: Ըստ այդմ, Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատումները ՈԱ ներքին և արտաքին գործընթացների հիմնական փոխկապակցող օղակներն են:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել Համալսարանի ուսումնական և հետազոտական աշխատանքների, հասարակությանը մատուցվող ծառայությունների որակը և կառավարման գործընթացների արդյունավետությունը՝ դրանք համապատասխանեցնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքներին:

Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը ստեղծում են անհրաժեշտ հենք, որի շրջանակներում համալսարանը ձևավորում է որակի ներքին ապահովման իր համակարգը՝ պատասխանատուների և կառույցների գործառույթներով, գնահատում համակարգի գործունեության արդյունավետությունը:

5. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակի ներքին ապահովման քաղաքականության հիմնական նպատակը Համալսարանը նախատեսում է իրականացնել հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով.

1) ներդնել և կատարելագործել որակի ներքին ապահովման՝ համակարգը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան,
2) ապահովել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահակիցների առավելագույն մասնակցության և որակի միտված թափանցիկ և հաշվետվողական մշակույթի տարածման նպատակով,
3) մշակել և ներդնել Համալսարանում դասավանդող անձնակազմի գործունեության, ուսանողների ուսումնառության, կրթական ծառայություններ մատուցող կառույցների գործունեության որակի մշտադիտարկման համակարգ,
4) մշտադիտարկել Համալսարանի գործընթացների արդյունավետությունը՝ ապահովելով ծառայությունների շարունակական բարելավումը,
5) մշտապես գնահատել հաստատված չափորոշիչների և կարգի հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի արդյունավետությունը և մշակել բարելավման առաջարկություններ,
6) կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում և նրանց որակավորումների շարունակական բարձրացման գործընթաց,
7) մշակել, իրականացնել և մշտապես կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ՝ որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով,
8) մշակել և կիրարկել կրթական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացմանը միտված մեխանիզմներ,
9) ապահովել մասնագիտական կրթական ձևագրերի և Համալսարանի գործունեության այլ ոլորտների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքագրումը, վերլուծությունը ու տարածումը,
10) հաստատել և ամրապնդել հանագործակցությունը ՈԱ գործակալությունների և այլ բուհերի ՈԱ բաժինների հետ,

11) պարբերաբար վերանայումների միջոցով շարունակաբար բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը:

6. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որակի ապահովման Համալսարանի քաղաքականությունը հաստատվում է Գիտական խորհրդի կողմից: Որակի ապահովման Համալսարանի քաղաքականության փոփոխության առաջարկով կարող են հանդես գալ.

1) Համալսարանի ռեկտորը,
2) Գիտական խորհրդին կից գործող ՈԱ մշտական հանձնաժողովը,
3) Գիտական խորհրդի անդամները,
4) Որակի ապահովման բաժնի ղեկավարը:

Գիտական խորհրդի նախագահ Ն.Ա.Միքայելյան

Գիտական քարտուղար Լ.Գ.Այդինյան